«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Փոխգործուն մեթոդների կիրառումը 7-րդ դասարանում «Имя существительное» թեմայի ուսուցման շրջանակներում ռուսաց լեզվի դասին

Առարկա՝«Ռուսաց լեզու»

Հեղինակ՝Արկադի Ավանեսով

Մարզ՝Շիրակ

Ուսումնական հաստատություն՝Ալվարի միջն.դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ.1 Փոխգործուն մեթոդների կիրառումը 7-րդ դասարանում «Имя существительное» թեմայի ուսուցման շրջանակներում ռուսաց լեզվի դասին

1.1Փոխգործուն մեթոդների կիրառման ազդեցությունը ռուսաց լեզվի դասին սովորողների խոսքային կարողությունների զարգացման վրա.....6

1.2 Ռուսաց լեզվից դասի օրինակ՝փոխգործուն մեթոդական համակարգի կիրառությամբ.....15

Եզրակացություն.....23

Առաջարկություններ.....24

Օգտագործված գրականության ցանկ.....25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում բարեփոխումները պայմանավորված են կրթության որակի բարձրացմամբ և սովորողների հետաքրքրությունն ու մոտիվացիան դեպի դասն ուղղորդելու նախապայմաններով: Այս համատեքստում կարևոր եմ համարում ուսումնական գործընթացում սովորողների դերակատարության ու մասնակցության վերարժևորումը: Հաշվի առնելով ժամանակաշրջանի մարտահրավերները՝ կարող եմ նկատել, որ սովորողների լայն շրջանակներում նկատվում է աշխատունակության ցածր մակարդակ, որի հիմնական պատճառներից մեկը կարող եմ համարել դասի ժամանակ վերջիններիս հետաքրքրությունների ու ցանկությունների անհամաձայնությունը: Սովորողները համացանցային հարթակներում ստանում են զանազան տեղեկատվություն, և ուսումնական գործընթացի ընթացքում ստացած գիտելիքները այլևս չեն համապատասխանում վերջիններիս պահանջմունքներին: Այստեղից կարող եմ եզրահանգել, որ սովորողն ինքն է հաճախ պահանջում, որ ուսուցիչը վերանայի դասավանդման իր մոտեցումները, դասը հագեցնի այնպիսի բաղադրիչներով, որ հետաքրքիր լինի, ինչն էլ ենթադրում է , որ սովորողն այդ պարագայում կդառնա դասապրոցեսի կենտրոնական սուբյեկտը, ավելի շատ կխոսի, կգործի դասին: Կարծում եմ, որ այս պարագայում կառուցողական ու արդյունավետ դասի նախապայմաններից է աշակերտակենտրոն ուսուցումը, որը ուղեկցվում է սովորողի անմիջական մասնակցայնությամբ, դասընկերների և ուսուցչի հետ ուղիղ համագործակցությամբ: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ վորջիններս կդառնան գործընթացի գործընկերային կողմ, կունենան իրենց դերը, ավելի շատ կաշխատեն դասին, կհամագործակցեն, կբանակցեն ընկերների հետ, կկատարեն ինքնուրույն եզրահանգումներ: Ուսուցիչ-սովորող համագործակցությունը թույլ կտա, որ վերջինս լինի ինքնուրույն, նախաձեռնող, անկաշկանդ կարողանա կարծիք հայտնել, իր հետաքրքրությունների մասին խոսել ու բավարարել դրանք հենց դասապրոցեսի ժամանակ: Ուստի կարծում եմ, որ

ավանդական դասն իր ողջ մեթոդական համակարգով հարկավոր է վերանայել՝ դասի հիմնական ակտիվ սուբյեկտ դարձնելով հենց սովորողներին:

Ռուսաց լեզվի ուսուցման շրջանակներումն նույնպես սովորողը պետք է լինի դասապրոցեսի գործընկերային կողմ: Իրականում օտար լեզուն մուտք է գործում սովորողի լեզվամտածողության մեջ թե' լսելու, թե' խոսելու ու հաղորդակցվելու ճանապարհով: Ուստի ավանդական դասին բազմանդամ դասարաններում խոսքի հնարավորություն տալով մի քանի սովորողի՝ նշանակում է ուսուցիչն ուղղակիորեն «զրկում է» մյուսներին խոսելու ու հաղորդակցվելու հնարավորությունից: Իսկ ահա փոխգործուն մեթոդական համակարգի ներդրումը մեծապես կարող է նպաստել սովորողների համընդհանուր մասնակցությանը դասին: Խմբային, համագործակցային աշխատանքների իրականացումը թույլ կտա, որ դասարանում սովորողների մասնակցությունը լինի համաչափ, որևէ սովորող չմնա պարապ: Այս մոտեցումը, կարծում եմ, բավականին արդյունավետ կարող է անդրադառնալ սովորողների աշխատունակության ու առաջադիմության վրա: Հետազոտության թեմայի արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է դասապրոցեսին և մասնավորապես ռուսերենի դասավանդման ընթացքում փոխգործուն մեթոդների կիրառման անհրաժեշտությամբ, որից կախված է սովորողների առաջադիմությունն ու համաչափ մասնակցությունը դասին: Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել ռուսերենի դասի ընթացքում ուսուցչի կողմից կիրառվող փոխգործուն մեթոդների ազդեցությունը կրթության որակի բարձրացման և դասի ժամանակ սովորողների դերի վերանայման համատեքստում: Հետազոտության խնդիրը:

● Ցույց տալ փոխգործուն մեթոդական համակարգի դերը սովորողների աշխատունակության բարձրացման ու առաջադիմության վրա:

● Կարևորել ռուսաց լեզվի դասաժամին սովորողների համագործակցությունը միմյանց հետ՝ որպես մի շարք կարողունակությունների զարգացման նախապայման:

● Մատնանշել ուսուցչի նախաձեռնող ու նորարար լինելու հանգամանքը՝ սովորողների առաջադիմության, ինքնուրույնության ու մոտիվացված լինելու

տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 1 ՓՈԽԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ «ИМЯ СУЩЕСТВИТЕЛЬНОЕ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԻՆ

1.1 Փոխգործուն մեթոդների կիրառման ազդեցությունը ռուսաց լեզվի դասին սովորողների խոսքային կարողությունների զարգացման վրա

Ռուսաց լեզվի դասավանդման հիմնական նպատակը տարրական դասարաններում սովորողի կապակցված խոսքի ձևավորումն ու զարգացումն է: Հաջորդիվ՝ միջին և ավագ օղակներում, ուսուցչի գերխնդիրն է հղկել, կոկել խոսքը, սովորողին տալ լեզվական այլ գիտելիքներ, որոնք թույն կտան ունենալ քերականորեն ճիշտ կառուցված ու կշռադատված խոսք: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսվում է օտար լեզվի դասավանդման մասին՝ պետք է նկատել, որ այս գործընթացը ուսուցչից կպահանջի հավելյալ ջանքերի գործադրում: Կապակցված խոսքի շնորհիվ է տեղի ունենում սովորողների հոգեկան զարգացումը, սոցիալականցումը, ձևավորվում է նրա ներաշխարհը: Ռուսաց լեզվի դասավանդումը միջին դպրոցում պայմանավորված է կապակցված խոսքի հարստացմամբ, բառային ֆոնդի ընդլայնմամբ, քերականական մի շարք գիտելիքների հաղորդմամբ՝ այդ թվում խոսքիմաստային կաղապարների ուսուցմամբ: Մինչդեռ կարող եմ նկատել, որ նույն դասարանի սվորողների շրջանում կարող են հանդիպել տարբեր մակարդակի օժտվածության սովորողներ, սա ևս լրջագույն խնդիր է հատկապես օտար լեզվի դասավանդման տեսանկյունից: Այս առումով բանավոր կապակցված խոսքի տիրապետման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում աշակերտակենտրոն ուսուցումը: Կապակցված խոսքը հանդիսանում է սովորողի խոսքի զարգացման ցուցանիշ. այն իր մեջ ներառում է խոսքի հնչյունային կուլտուրան, քերականական կառուցվածքը, բառապաշարը: Բացի այդ բանավոր խոսքը անհատի մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից, է և դրա զարգացումը տեղի է ունենում մարդու կյանքի ընթացքում

և անընդհատ ենթարկվում է մշակման, ուստի այստեղ հետևողական լինելը պարտադիր է: Բանվոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով և կարևոր է, նախապայման է երբ սովորողին իր խոսքի նկատմամբ ներշնչում ենք վստահություն և տալիս հնարավորություն անկաշկանդ խոսելու և արտահայտվելու: Շատ կարևոր է, որ այս ճանապարհին ուսուցիչը ցուցաբերի առավել զգոնություն և, սովորողին բացառապես խրախուսելով, հարթի ճանապարհ դեպի վերջնարդյունք: Դպրոցականների համար պետք է անընդհատ ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ: Պակաս կարևոր չէ չկաշկանդել վերջիններիս ինքնուրույն մտածողությունն ու դրանից բխող ոչ հավաստի ու մտացածին խոսքը, քանի որ ցանկացած միտք պետք է հնչի, որպեսզի կյանքի այդ կարևոր փուլում սովորողը ստանա բոլոր անհայտների պատասխանները: Հարկավոր է թույլ տալ, որ դպրոցականը իր մեջ կուտակված ֆանտազիաները, պատկերացումներն ու երազանքներն անպայման արտաբերի: Այսպես մենք չենք նվաստացնում նրա կամարտահայտության իրավունքը, ավելին՝ նա ավելի արագ է ինտեգրվում սոցիալական միջավայրին ու գիտակցում իր դերն այդտեղ, առանց վախերի հաղորդակցվում օտար լեզվով: Օտար լեզվով հաղորդակցվելու, տվյալ լեզվի արտահայտչամիջոցներին տիրապետելու ամենաարդյունավետ ձևը բնական հաղորդակցումն է: Շատ կարևոր է ապահովել բնական հաղորդակցության ձևերի բազմազանությունը սովորողի խոսքի զարգացման գործընթացում: Ինչպես արդեն նշեցինք, դպրոցականին ցանկացած գործունեության ժամանակ անհրաժեշտ է քաջալերել նրա արտահայտվելու ցանկությունը, հնարավրություն տալ ազատ, անկաշկան խոսելու, ինչը արդյունավետ կերպով կարող է նպաստել խոսքային հնարավորությունների ընդլայնմանը: Որքան մեծ է սովորողի արտահայտվելու և խոսելու ցանկությունը, այնքան արագ է մշակվում և հոկվում խոսքը: Ռուսերենի դասավանդման ընթացքում կարևոր է նաև սովորողների մոտ ձևավորել լսելու կարողություններ: Քերականորեն ճիշտ կառուցված, ոչ բարդ բառային պաշար պարունակող, ականջահաճո խոսք լսելը կարող է նպաստել օտար լեզվի արտահայտչամիջոցների ընկալմանը: Նմանօրինակ խոսքը կարևորագույն գործիքն է, որը կարելի է ուղղել ի շահ երեխայի: Այս առումով շատ մեծ ու կարևոր է նաև ծնողի դերակատարումը: Տանը, բակում, շփումների ժամանակ, արտաքին այլ ազդակների հետ շփման, ՏՀՏ 7 տեխնոլոգիաներից օգտվելիս շատ կարևոր է, որ

երեխան լսի ընդօրինակելի խոսք: Այս առումով պետք է նկատել, որ երեխաներն արագ են ընկալում ցանկացած տեղեկատվություն, ուստի անորակ ու սխալ բառամթերքն ու արտահայտչամիջոցները միմյայն բացասական ազդեցություն են ունենալու սովորողի՝ նոր ձևավորվող խոսքի վրա: Երեխայի ընկալումների առումով հետաքրքիր միտք է արտահայտում խորհրդային հոգեբան Լև Սեմյոնովիչ Վիգոտսկին. «Ուսուցման գործընթացների ժամանակային հարաբերակցության և դրանց հոգեբանական հիմքերի զարգացման հարցի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացումը միշտ առաջ է ընթանում ուսուցումից: Երեխան ավելի վաղ է տիրապետում որոշակի հմտությունների, քան գիտակցաբար և կամավոր կերպով սովորում է դրանք կիրառել: Զարգացումը տեղի է ունենում այլ տեմպերով և ունի իր ներքին տրամաբանությունը»/1/: Տեղին կլինի ընդգծել, որ սովորողը որոշակի բառի սխալ արտաբերման ընթացքում հարմարվում է, ընկալում այն որպես իրողություն, մինչդեռ հետագայում սխալ իմացության շտկումն էլ ավելի բարդ է, քան նոր բառի ուսուցումը: Այս համատեքստում է, որ էլ ավելի է կարևորվում ավելորդ բառամթերքի օգտագործման բացառումը օտար լեզվի դասավանդման ժամանակ: Բանավոր խոսքի զարգացումը չի կարող առանձնացվել մտավոր զարգացումից: Անընդհատ մտավոր գործունեություն կատարող սովորողի միտքը գնալով ավելի կազմակերպված է դառնում, հետևապես նաև խոսքն է լինում տրամաբանված և իմաստալից: Սահուն խոսքը մտավոր բարձր զարգացման արդյունքն է: Պետք է պայմաններ ստեղծել խոսքի առաջացման համար, ինչպես նաև խոսքի ուսուցման գործընթացում հարկավոր է խոսքի պլանավորված հերթականությամբ առաջ գնալ: Կարևոր է պայմաններ ստեղծել սովորողների խոսքի մոտիվացիայի համար, ինչը նրանց խրախուսում է, իսկ խոսքն անհամեմատ ակտիվանում է: Խոսքի մոտիվացիայի առկայությունը նշանակում է, որ երեխան ունի ներքին մոտիվացիաարտահայտել իրմտքերը: Դա տեղի է ունենում հաղորդակցության հանգիստ, բնական միջավայրում/2/: Բառապաշարում արտացոլվում է խոսքի բովանդակությունը: Բառերը ցույց են տալիս առարկաներ, երևույթներ, նրանց միջև 8 գոյություն ունեցող կապեր, գործողություններ, առարկաների որակներ, հատկանիշներ: Յուրացնելով օտար բառերը՝ սովորողը, իրականացնում է շրջապատի հետ հաղորդակցման խնդիրներ: Օտար լեզվով հաղորդակցվելու, բառապաշարի զարգացման մեջ կարևոր են բառի նշանակության յուրացումը, նրա

տեղին օգտագործումը տարբեր իրադրություններում և հաղորդակցման մեջ: Անշուշտ, առանց քերականության հնարավոր չէ խոսքային ճիշտ հաղորդակցում: Սա սովորողներ համար առավել բարդ է ընկալելը, ուստի նրա լեզվի քերականական կողմը յուրացվում է հատկապես գործնականում՝ ուսուցչի խոսքի ընդօրինակման և լեզվական ընդհանրացումների շնորհիվ: Այսպիսով, ռուսերենի դասավանդման ժամանակ ընդհանուր զարգացման և մտավոր դաստիարակության խնդիրների համակարգում առանձնանանում է խոսքային կարողության զարգացումը: Ինչպես նշեցինք, սովորողին դասի կենտրոնում պահելը բավականին նպաստավոր կարող է անդրադառնալ վերջինիս աշխատունակության բարձրացման առումով: Սակայն օտար լեզվի դասավանդումը բազմակազմ դասարաններում ուսուցին հաճախ է դնում լրջագույն խնդիրների առաջ: Միջին դպրոցում «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (5-9-րդ դասարաններ) առարկաների պարապմունքներին դասարանը բաժանվում է երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 24 և ավելի է/3/: Կարծում եմ, որ նման մոտեցումը ճիշտ է և ժամանկի ընթացքում կտա իր դրական պտուղները: Փոխգործուն մեթոդների կիրառությունը թույլ է տալիս, որ սովորողները անընդհատ լինեն համագործակցության մեջ, երկխոսեն, քննարկեն ուսուցանվող նյութը, միասին գտնեն հարցերի պատասխաններն ու գործնական կիրառության մեջ դնեն իրենց տեսական գիտելիքները: Երկխոսությունը հանդիսանում է հաղորդակցության հիմնական ձև: Կարևոր է սովորողին սովորեցնել լսել և հասկանալ դիմացինի խոսքը, միտքը, ձևակերպել իր միտքը, երկխոսությունը առաջ տանել, հարցեր տալ և

պատասխանել՝ օգտվելով լեզվական տարբեր միջոցներից: Այն մեծ նշանակությունունի սովորողների անձի ձևավորման համար, քանզի վերջիններս աշխարհին ծանոթանում են իրեն հետաքրքրող հարցերից ստացած 9 պատասխանների հիման վրա: Հենց այդ պատասխանները հետաքրքիր կերպով հանդիսանում են նոր բառեր սովորելու աղբյուր: Հնչում է հարցը, սովորողը ստանում է սպառիչ պատասխան՝ արդյունքում իր բառային պաշարն ավելացնելով նոր հասկացությունների, երևույթների անվանումներով: Փաստորեն, երկխոսությունը կարելի է դիտարկել որպես օտար լեզվի բառային պաշարի հարստացման սկզբնաղբյուր: Պակաս կարևոր չէ այն, որ երկխոսական խոսքը աստիճանաբար զարգացնում է ինքնուրույն խոսքը՝ մենախոսություն: Մենախոսությունը ծնվում է երկխոսության խորքերում: Մենախոսական խոսքի

զարգացումը ներառում է լսողական հմտությունների ձևավորում, վերապատմելու, անկախ խոսք կառուցելու կարողությունների ձևավորում/4/: Այսպիսով, միջին դպրոցական տարիքում՝ ռուսաց լեզվի դասավանդման շրջանակներում, շատ կարևոր է, որ սովորողը ունենա կապակցված խոսքի բնականոն զարգացումը: Խոսեմ ակտիվ ուսուցման և փոխգործուն մեթոդական համակարգի սկզբունքների մասին: Ակտիվ ուսուցումը ենթադրում է շարժուն ու համագործակցային դասերի իրականացում, որտեղ սովորողը չի սպասում, որ ուսուցիչն իրեն դաս բացատրի: Այս պարագայում նույնիսկ նոր նյութի հաղորդման ժամանակ ակնկալվում է սովորողի ուղիղ մասնակցությունը: Սովորողն ու ուսուցիչը համագործակցում են, որևէ փոխգործուն խաղային մեթոդով սովորում նոր դասի կարևոր հասկացությունները, կանոնների հիման վրա բերում են օրինակներ, զանազան աղյուսակների ու դիագրամների օգնությամբ մատնանշում նմանություններն ու տարբերությունները: Փոխգործուն մեթոդների կիրառումը դասին կատարում է երկու կարևոր գործառույթ.

- նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,
- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը:

Փոխգործուն մեթոդները նպաստում են սովորողների մտածողությանզարգացմանը, սեփական կարծիք հայտնելուն, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանը: Այդմեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են, որոնց նպատակն է համատեղ որոնումներ կատարել, ընդհանուր նպատակի համար որոշումների կայացնել ու իրագործել:

Ինչպես նշել էի՝ ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներին:

Աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներն են.

- փոխուսուցումը, համագործակցություն
- ակտիվությունը,
- կարծիքի, դիրքորոշման, ցանկության անկաշկանդ արտահայտումը,

● դասին սովորողների համաչափ մասնակցություն:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

● սովորողների համար գիտելիքաստեղծ միջավայրի ապահովումը,

● հետաքրքրությունների, նախասիրությունների բացահայտումը,

● կոլեկտիվ մտածողության ձևավորումը

● անհատական առանձնահատկությունների բացահայտումը, խոսքայի կարողությունների ձևավորումը,

● ստեղծագործական մտածողության զարգացումը,

● ինքնուրույն գործելու կարողության խրախուսումը,

● վերլուծական կարողությունների ձևավորումը:

Փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման համար յուրաքանչյուր ուսուցիչ ազատ է: Ընդ որում՝ նա կարող է հանգիստ դրանք փոփոխության ենթարկել՝ հարմարեցնելով դասարանի պահանջներին: Մեթոդի ցանկացած կիրառում եզակի է և անկրկնելի: Կարող եմ պնդել, որ ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:

Անդրադառնանք դասավանդման փոխգործուն մի շարք մեթոդների, որոնց օգնությամբ կարելի է խթանել դպրոցականի խոսքային կարողությունը, պատկերավոր ու ստեղծագործական մտածողությունը, ինքնուրույնությունն ու քերականական գիտելիքների հաղորդումը ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում:

Կարելի է իրականացնել խոսքային տարբեր առաջադրանքներ: Օրինակ՝ սովորողներին կարելի է հանձնարարել խմբեր կազմել և տրված գոյականներով պատմություն հորինել, կամ տրված տեքստից երկսյուն աղյուսակում դուրս գրել

եզակի ու հոգնակի գոյականները, գտնել դրանց տրվող հարցերը: Նմանօրինակ հանձնարարություններ օգնությամբ սովորողները գործնականում կիրառում են իրենց բառային պաշարն, ինչպես նաև ձեռք են բերում երկխոսելու հմտություններ: Այստեղ շեշտը դրվում է համատեղ գործունեության վրա, որի ընթացքում առաջանում են իրադրությունների, գործողությունների քննարկման խնդիրներ:

Օրինակ՝ կարելի է հանձնարարել նկարել դասավանդվող պատմության հերոսին, ինչի ընթացքում սովորողները կարող են միմյանց հարցնել իրենց աշխատանքների մասին, քննարկեն գույների, պատկերների ընտրությունները, կիսվեն իրենց նախասիրություններով, մեկնաբանեն հերոսի բնավորության գծերը: Սովորողների միջև հաստատվում է փոխադարձ կապ, տեղի է ունենում կարծիքների, մտքերի փոխանակում: Ռուսաց լեզվի դասի ընթացքում սովորողների համատեղ գործունեությունը օգնում է երկխոսության հմտություններ զարգացնել: Փոխգործուն մեթոդների կիրառման ընթացքում սովորողների շփման մշակույթը զարգացնելու նպատակով արդյունավետ է կիրառել խաղային իրավիճակների, տարբեր բովանդակության գեղարվեստական ստեղծագործությունների բեմականացումների և զրույցների մեթոդը: Զարգացման նպատակով կարևորվում է նաև երկխոսություն պարունակող շարժախաղերի դերը: Նմանօրինակ եղանակներով ամրապնդվում է խոսքը զրուցակցին ուղղելու ունակությունը, որևէ գործողություն իրականացնելուց առաջ խաղընկերոջ ասածների շուրջ մտածելու, հարցերը ճիշտ ձևակերպելու, պատասխանելու և այլ հմտություններ:

Բավականին արդյունավետ մեթոդ է զրույցը, որը բանավոր խոսքի

զարգացման գործնական միջոցներից է: Ուսուցիչը պետք է անպայման տիրապետի զրույցը կազմակերպելու արվեստին: Զրույցի թեման այնպես պետք է ընտրվի, զրույցն այնպես պետք է կառուցվի, որ սովորողները կարողանան հետևել թեմայի զարգացման տրամաբանական ընթացքին: Սա շրջակա միջավայրին ծանոթացման, ինչպես նաև կապակցվան խոսքի զարգացման միջոց է: Շատ կարևոր է զրույցի նշանակությունը: Այն նպաստում է դպրոցականի մտածողության զարգացմանը, օգնում է իմաստավորելու սեփական փորձը, ճիշտ ձևակերպելու միտքը, ինչպես նաև լսել և հասկանալ ուրիշի խոսքը:

ՀՀ դպրոցներում ռուսերենի՝ որպես օտար լեզվի ուսուցումը պարտադիր է: Այն կանոնակարգվում է համապատասխան առարկայական չափորոշիչներով և ծրագրերով: Ռուսաց լեզվի չափորոշիչները և ծրագրերը արտացոլում են ուսուցման նոր մոտեցումները՝ պայմանավորված կրթական բովանդակությամբ և կառուցվածքով: Ռուսաց լեզվի դասընթացի նպատակն է՝ սովորեցնել դպրոցականներին կիրառել ուսուցանվող լեզուն հաղորդակցման տարբեր իրավիճակներում: Ուսուցման հաղորդակցական ուղղվածության կարևորագույն սկզբունքն է՝ սովորել հաղորդակցվել հաղորդակցվելով: Ռուսաց լեզուն, լինելով հաղորդակցման և ճանաչողության միջոց, միաժամանակ սովորողների համար հանդես է գալիս որպես լայն տեղեկատվության աղբյուր, նրանց հաղորդակից դարձնում համամարդկային ու համամշակութային արժեքներին: Ուսուցչի համար անչափ կարևոր է, որ մեթոդական աշխատանքը (ուսուցման բովանդակությունն ու ձևերը) կատարվի տրամաբանորեն հիմնավորված, և նյութի մատուցման ձևը համապատասխանի բովանդակությանը: Լեզու դասավանդողի կարևորագույն խնդիրներից են՝ ապահովել ուսուցման որակական նոր մակարդակ և գործնական ուղղվածություն, բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը: Անչափ կարևոր է նաև դասավանդման գործընթացում հավի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական պահանջմունքները, նրա օժտվածությունն ու դրա բացակայությունը: Ուսուցչի մանկավարժական գործունեության սկզբունքներից է սովորողի ուսուցման, դաստիարակության եւ զարգացման նկատմամբ անհատական նպատակաուղղված մոտեցումը/5/:

Այդ տեսանկյունից կարևորում եմ առարկայական մեթոդմիավորման աշխատանքը, որը կոչված է կատարելագործելու դասավանդման որակը՝ ապահովելու նոր մեթոդական ձևեր ու միջոցներ, ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացման համար ստեղծել պայմաններ, օգտագործել ռուսաց լեզվի դասերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման համար և այլն: Այսպիսով, փոխգործուն մեթոդները, աշակերտակենտրոն ուսուցումը, մանկավարժական նոր ու արդիական մոտեցումները ռուսաց լեզվի դասավանդմանընթացքում կարող են լուծել մի շարք մանկավարժական խնդիրներ և նպաստել սովորողների առաջադիմությանն ու աշխատունակության բարձրացմանը:

Ուստի և կարևոր եմ համարում ուսուցչի ինքնակրթվելու, զարգանալու, նոր գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու ցանկությունները:

1.2 Ռուսաց լեզվից դասի օրինակ՝ փոխգործուն մեթոդական համակարգի կիրառությամբ

Սույն հետազոտական աշխատանքն ուղղված է ուսուցչի մասնագիտական գործունեության ընթացքում հանդիպող կոնկրետ ուսումնական, մանկավարժական խնդիրների վերլուծությանն ու այդ խնդիրների վերաբերյալ հնարավոր լուծումների քննարկմանը: Աշխատանքի առաջին գլխում խոսվեց միջին դպրոցում «Ռուսաց լեզու» ուսումնական առարկայի հիմնական նպատակների ու խնդիրների մասին: Այդ խնդիրների շարքում առանձնացվեց սովորողների խոսքային կարողության,պատկերավոր մտածողության, բառապաշարի հարստացմանն ուղղված ուսուցչի մոտեցումները, ինչպես նաև դասավանդման ընթացքում սովրողների արժեքային համակարգի ձևավորման, լեզվամտածողության զարգացման ու ինքնուրույնության խթանման հիմնախնդիրները:

Նպատակների սահմանումը կրթական գործընթացի կարևոր փուլն է համարվում, որից էլ կախված է ուսումնական ընթացքի բնականոն ու հաջող առաջընթացը:

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է կազմակերպչական ընթացքի լավագույն տարբերակի ընտրությամբ, կրթության 14 բովանդակության, մեթոդների, միջոցների, ուսուցման ձևերի նպատակային համադրմամբ: Շատ կարևոր է, որ դասի պլանավորման փուլում հաշվի առնվեն

սովորողի պահանջմունքները, ճանաչողական կարողությունները, նպատակ դրվի սովորողների համար ինքնուրույն գործելու հնարավորություններն ընդլանել, ստեղծել վերջիններիս նորարարական գաղափարներն ու ներուժը գործի դնելու համար:

Ռուսաց լեզվի ուսուցման գործընթացի կազմակերպման ընթացքում կրթական նպատակների շարքում պետք է նկատի ունենալ՝

● դպրոցականների լեզվաբանական աշխարհայացքի ձևավորումը,

● լեզվի իմացության ապահովումը, բառապաշարի հարստացումը,

● սովորողների գեղագիտական դաստիարակությունը ռուսաց լեզվի միջոցով,

● լեզվի գործնական կիրառության ապահովումը,

● ուղղագրության և կետադրության հմտությունների ձևավորումը,

● պատկերավոր մտածողության զարգացումը,

● գրավոր ու բանավոր խոսքի համաչափ զարգացումը,

● լեզվի դասավանդման ընթացքում սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը: Կարծում եմ, որ այս նպատակներին հասնելու համար անչափ կարևոր է դասի կազմակերպչական հատվածում հաշվի առնել սովորողների դերի կարևորությունը: Վերահաստատելով աշխատանքի առաջին ենթագլխում արված պնդումները՝ կրկին կարևորեմ աշակերտակենտրոն դասի դերը: Ստորև կներկայացնեմ փոխգործուն մեթոդական համակարգի կիրառությամբ դասավանդման օրինակներ, որոնց միջոցով

կփորձեմ հիմնավորել կատարածս պնդումները: Օրինակները, որոնք ստորև կներկայացվեն, վերաբերվում են ձևաբանական գիտելիքներին, մասնավորապես՝ «Имя существительное» թեմայի ուսուցմանը: 5-րդ դասարանի սովորողը մայրենիից արդեն իսկ ծանոթ է գոյականին, ուստի ռուսաց լեզվի շրջանակներում թեմայի ուսուցումն ինչ-որ առումով կարող է թվալ դյուրին: Այդուհանդերձ, յուրաքանչյուր լեզու ունի իր ձևավաբանական առանձնահատկությունները, ուստի և չի կարելի ասել, որ թեման կարող է հեշտ ընկալվել: Ուսուցչի խնդիր է սովորողների մեջ

ձևավորել ճանաչողական հմտություններ, որպեսզի վերջիններս կարողանան զանազանել «գոյական» խոսքի մասն այլ բառերի շարքում, կարողանան դրանք ճիշտ գործածել նախադասությունների մեջ, սովորեն վերջինիս քերականական հատկանիշները:

Какие слова относятся к именам существительным?

Կարելի է կատարել խմբային աշխատանք, որտեղ սովորողները կդասդասեն գոյականի տեսակներն աղյուսակների մեջ: Ուսուցիչը դասարանը կբաժանի 4 խմբի: Յուրաքանչյուր խմբի կտրվի գոյականի առանձին տեսակի անվանում, որին համապատասխան պետք է լրացվի աղյուսակը:

Названия вещей	**Названия лиц Названия веществ**	**Названия живых существ**
стол, стена, окно, ножницы, сани	ребёнок, девочка, крупа, мука, сахар, юноша, женщина, сливки, кислота человек	кошка, собака, ворона, дятел, змея, окунь, щука, бактерия, вирус, микроб

Բառերը դասդասելուց հետո ուսուցչի հրահանգով խմբի անդամները կտան գոյականներին տրվող հարցերը և դրանք կգործածեն նախադասությունների մեջ: Աշխատանքի ավարտին խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքն ու կստանան համապատասխան միավորներ: Աշխատանքի իրականացման արդյունքում սովորողները սովորեցին տարբերել գոյականի տարատեսակները, դրանք դրեցին կիրառության մեջ՝ կազմելով նախադադսություններ և խմբային եղանակով գտան գոյականներին տրվեղ հարցերը: Նմանօրինակ բազմաբաղադրիչ խմբային աշխատանքների իրականացման ընթացքում սովորողները սովորում, ամրապնդում են ուսումնական նյութը՝ միմյանց օգնելով:

Գոյականի թվային կարգի ուսուցման շրջանակներում կարելի է կիրառել «Խճանկար» մեթոդը: 20 սովորողից բաղկացած դասարանը ուսուցիչը կբաժանի 4 խմբի և կնշանակի խմբի ավագ: Սովորողներին կբաժանվի գոյականի թվի

վերաբերյալ կանոններով թերթիկներ: Յուրաքանչյուր խմբի ավագ կհսկի, որ իր թիմում կատարվի քննարկում, սովորողները վերլուծեն կանոնները, հասկանան ու բերեն օրինակներ:

Ուսուցիչը աշխատանքի տեսական հատվածի ուսումնասիրությունից հետո կլսի յուրաքանչյուր խմբին: Սովորողները կսահմանեն կանոնները, կբերեն իրենց օրինակները: Հաջորդիվ խմբերին կարելի է առաջարկել տեսական գիտելիքներն ամրապնդել գործնական առաջադրանքի միջոցով:

T-ձև աղյուսակի միջոցով կկազմեն տրված բառերի հոգնակի թիվը:

Աշխատանքի ավարտին ուսուցիչը կունենա հետևյալ վերջնարդյունքները՝

● Սովորողները ուսուցանվող նյութը կուսումնասիրեն ինքնուրույն, կսովորեն միմյանց օգնելով աշխատել, նրանց մոտ կձևավորվի կոլեկտիվ մտածողություն:

● Աշխատանքի գործնական հատվածում կսովորեն տեսական գիտելիքներն ու գործնական կարողությունները համադրել:

● Սովորողները իրենց սովորածը կսովորեցնեն միմյանց, կամբողջացնեն գիտելիքները միասին:

● Կձևավորվի միասին մտածելու, կոլեկտիվում աշխատելու կարողություն:

Կիրառված փոխգործուն մեթոդի առավելություններն են՝

● Սովորողի կողմից ուսուցանվող նյութի ինքնուրույն ուսումնասիրություն,

● խմբային աշխատանքի միջոցով դասընկերների հետ համագործակցային հարաբերությունների հաստատում:

● Ուսուցանվող նյութի հեշտ ընկալում:

● Ուշադրության և պատասխանատվության զարգացում:

● Սովորել սովորեցնելով կարողունակության ձևավորում:

● Ժամանակի արդյունավետ օգտագործում:

● Հաշվետու լինելու կարողության ձևավորում:

● Նյութի ներկայացման բազմապիսի ձևերի հնարավորություն, ինչն կարող է կրկնության բազմաթիվ հնարավորություններ ընձեռել:

● Մոտիվացիայի բարձրացում, հետաքրքրությունների բավարարում:

Գոյականի թվային կարգն ամրապնդելու համար բավականին արդյունավետ միջոց է զույգերով աշխատանքը: Յուրաքանչյուր զույգի կտրվի առանձին աշխատանք: Ընդ որում՝ այսպես ուժեղ և օժտված սովորողները կարող են օգնել ավելի թույլ սովորողներին:

Измените имена существительные по числам.

Кухня – кухни, эклеры – эклер,

Ветка, губы, ёршик, иголки, взгляд, аккорд, арбуз, пиджаки, кувшин, индюки, воды, двигатель, карусель, край, флаги, когти, косы, ветер, веник, антенна.



Սովորողների ուշադրությունը, մտապահելու կարողությունը ստուգելու համար կարելի է կիրառել «Սատանայի հնարը»: Կարելի է խաղալ շարքերով խաղ, որի ընթացքում տարբեր շարքերի սովորողները նյութն ամրապնդելու համար միմյանց հարցեր կուղղեն: Ուսուցիչը սխալ պատասխաններին ուշադրություն չի դարձնի և կընդունի որպես ճիշտ: Աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը հարց կուղղի սովորողների և կհասկանա, թե որքանով էին ուշադիր դասին և արդյոք նկատեցին սխալ պատասխանները: Վերջում կհնչեն ճիշտ պատասխանները:

Գոյականը ճանաչելու համար կարելի է կատարել նմանօրինակ առաջադրանքներ: Աշխատանքը երկբաղադրիչ է: Առաջին պահանջով սովորողները վերհիշում են ուղղագրությունը, իսկ երկրորդով՝ փորձում են ճանաչել գոյականները: Սովորողները կաշխատեն ինքնուրույն, աշխատանքի ավարտից հետո կփոխանցեն աշխատանքը միմյանց ՝ կատարելով փոխադարձ ստուգում:

Прочитай слова, вставь пропущенные буквы. Подчеркни только имена существительные.

Ч…йник, кр…чать, к…ртина, кр…сивый, н…ра, д…ж…ливый, скуч…ю, к…рзина, пр…гулка.

Упражнение 1. Запиши в первый столбик имена существительные, отвечающие на вопрос кто?, во второй столбик- имена существительные, отвечающие на вопрос что?



Կարելի է կատարել նաև աշխատանք տեքստի հետ: Սովորողները կկարդան տեքստը, դուրս կգրեն գոյականները, կտան դրան տրվող հարցերը, կորոշեն գոյա

կանների թիվն ու կկազմեն

նոր նախադասություններ: Շատ կարևոր է նաև լրացուցիչ նյութերի տրամադրումը օտար լեզվի ուսուցման

շրջանակներում: Ուսուցիչը պետք է սովորողներին ծանոթացնի նաև լեզվի առանձնահատկություններին, արտասանության ձևերին, ուղղախոսությանը, այդ թվում տրամադրելով նաև մի շարք հարակից տեղեկություններ, որոնց թվում են՝

● Ռուսերենը հանդիսանում է «Հնդեվրոպական լեզվաընտանիքի» արևելասլավոնական լեզվախմբի լեզու:

● Ռուսերեն խոսում է աշխարհում 278 միլիոն մարդ:

● Աշխարհի լեզուների դասակարգման համաձայն՝ ռուսերենը զբաղեցնում է չորրորդ տեղն ամենաթարգմանվող լեզուների շարքում:

● Ռուսաց լեզուն, ըստ հնչյունակազմական դասակարգման, թեքական համադրական լեզու է

● Աշխարհի յոթ պաշտոնական աշխատանքային լեզուներից մեկը ռուսերենն է:

Կարելի է կիրառել նաև ՏՀՏ գործիքներ, որպեսզի դասը լինի բովանդակային առումով հագեցած: Գոյականի ուսուցման շրջանակներում կարելի է պատրաստել նկարներով և անիմացիաներով տեսասահիկներ, որոնց միջոցով կամրապնդվի ուսուցանվոց նյութը: Սովորողները կսովորեն նոր բառեր, կանվանեն գոյականները, կնշեն թիվը, սեռը, կտան դրանց տրվող հարցերը:

Այսպիսով կարծում եմ, որ փոխգործուն մեթոդների կիրառումը ռուսերենի դասին կարող է ունենալ բացառապես դրական ազդեցությունը: Դասարանը համաչափ կմասնակցի դասին, սովորողները կլինեն ակտիվ, հնարավորություն կունենան միմյանց օգնելու: Խաղային մեթոդների շրջանակներում սովորողի համագործակցությունն էլ կոգևորի ու կմոտիվացին վերջիններիս՝ ամեն կերպ կենտրոնացնելով նրանց ուշադրությունը ուսումնական գործընթացի վրա: Անշուշտ, ավանդական մեթոդները նույնպես ունեն իրենց դերն ու նշանակությունը դասավանդման գործընթացում, սակայն կարևոր է նաև փաստել, որ սովորողներն օր օրի ավելի ակտիվ ու հետաքրքրասեր են դառնում, մեծանում է նրանց պահանջմունքների շրջանակը, որի վրա իր ուղիղ ազդեցությունն ունի համացանցը: Հետևաբար, ուսուցիչը նույնպես պետք է փորձի դասի կառուցվածքն այնպես ձևավորել, որ կարողանա սովորողին բերել դեպի դասապրոցես: Այս առումով շատ կարևրոր է մանկավարժական գիտակցությունը, որն էլ ուսուցչին կարող է մղել դեպի նոր նվաճումների ու հաղթանակների:

«Ուսուցչն իրավունք ունի ընտրելու և կիրառելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ՝ իր ընտրությամբ օգտագործելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած դասագրքեր և ուսուցողական նյութեր, ձեռնարկներ և սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների

գնահատման մեթոդներ»: Լիահույս եմ, որ սույն հետազոտության արդյունքում ձեռք բերված գիտելիքները կծառայեն իրենց նպատակին և կօգնեն հետագա մանկավարժական գործունեությանս ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրական վերջնարդյունք ունենալու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից: Ուսուցիչին նման հնարավորություն է ընձեռում փոխգործակցային աշխատանքը առարկայական մեթոդական միավորման ներսում, գործընկերների հետ ուղիղ համագործակցությունը, զանազան վերապատրաստումներին մասնակցությունը: Նախաձեռնողականությունը մոտեցումը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի մոտիվացվել, ուսումնասիրել ոլորտում առկա խնդիրներն ու նորությունները, կիսվել սեփական փորձով, սովորել ու սովորեցնել՝ նպատակ ունենալով ապահովել արդի կրթական համակարգի սահմանած պահանջներն ուսուցչից: Սովորողների առաջադիմությունն ապահովելու համար ուսուցիչը պետք է բարձր գնահատի ակտիվ ուսուցման դերը, դասին հաճախ օգտագործի փոխգործուն մեթոդներ, հետաքրքիր ու ճանաչողական խաղային հնարներ, դասին ներառի ՏՀՏ բաղադրիչ: Հատկապես օտար լեզվի ուսուցման համար կարևոր է պատկերավոր ու նկարագրական բաղադրիչներ ներառել դասին, հաճախ սովորողներին հնարավորություն տալ լինել սովորեցնողի դերում: Այս ամենը ուսուցիչը պետք է կատարի, որպեսզի բարձրացնի դասարանում սովորողների առաջադիմությունը, հնարավորություններ ստեղծի առողջ մրցակցության համար:

Ամեն բան հենց ուսուցչից է կախված: Եթե կա մոտիվացիա, լավն արարելու, առաջ գնալու ձգտում, ապա տեխնոլոգիապես հագեցած այս ժամանակաշրջանում հնարավոր է գտնել ուղիներ ոլորտում հաղթանակների հասնելու՝ ի շահ երկրի բարգավաճման, մատաղ սերդի կրթության ու դաստիարակության:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

✔ Սովորողների մոտ ռուսերենի հանդեպ հետաքրքրություն առաջացնելու համար կարելի է նրանց հաճախ տանել ռուս ժողովրդի պատմությանն ու լեզվին առնչվող վայրեր:

✔ Հարկավոր է յուրաքանչյուր դասի մեջ ներառել սովորողների հետաքրքրությունը շարժող մի հնար, ՏՀՏ գործիք, խաղային մեթոդ, որպեսզի դասն ընթանա ակտիվ, և սովորողներն ունենան զբաղվածություն:

✔ Հարկավոր է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր մեթոդական միավորումների ներսում ուսուցիչների արդյունավետ համագործակցության համար, ինչի արդյունքում կարելի է կազմակերպել հետաքրքիր ու բովանդակային ինտեգրված դասեր:

✔ Կարելի է սովորողների հետ հաճախ կազմակերպել ռուսերենով մանկապատանեկան ֆիլմերի դիտումներ, ապա քննարկել ֆիլմը:

✔ Սովորողների խոսքային կարողությունները զարգացնելու համար հարկ է, որ ուսուցիչը հաճախ դիմի հարցադրումների մեթոդին: Այսպես սովորողը հնարավորություն է ստանում շատ խոսելու:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Л. С. Выготский «Мышление и речь», Москва 1934, էջ 31

2. В. И. Яшина, М. М. Алексеева,«Теориа и методика развития речи детей», էջ 12:

3.https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=114514

4. В. И. Яшина, М. М. Алексеева,«Теориа и методика развития речи детей», էջ 37:

5.http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0 ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին, հոդված 4, կետ «ա»:

6.https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345

ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 27, կետ 7: